

Թիւն Հայ եկեղեցական մը: Մանաւանդ այն տեսակ ժամանակի մը մէջ Ռուսիոսի տնունը (481) կը յիշուի որ որպէն Հայոց Բաղկերան օրինաւոր կաթողիկոսը ունէր:

(Էջ 602) Հ. Մեարաց իւր կարծիքով կուզէ Սոկրատի մէկ սխալը սրբազրել: Պատմիչը կրթ. է. Գրոց ԺԼ. ղիտոյն մէջ. Քանդի թաղաւորին Պարսից Խաթիկերտիայ որ զորս տեղ քրիստոնեայան ոչ հալածէր փախճանեալ էին: Այս առգերուն հակառակ ցոյց կուտայ թէ քրիստոնեաների հալածիչը Յադկերան էր, որ իւր թաղաւորութեան վերջերս մ 414—420 թ. սկսեց հալածել նոցա: Սոկրատի պատմածը ստոյգ է: Պատմութենէն զիտեմք թէ Յադկերան Ա. քրիստոնէից դէմ մտնաւ որ հալածանք չհանեց, այլ շատ ներողամիտ դանդաղեցաւ, այս մասին Նեոպլէնի իր Etudes Historiques sur la Perse Ancienne ուսումնասիրութիւն զործին մէջ լաւ կը խօսի Յադկերան Ա.ի մասին (էջ 157—158): Տ. Մովսէսեան առանց ընտրութեան Միլնի ծառօթութիւններուն հետեւելով է որ այդ տեսակ վերականգնելու մէջ կիշնայ յաճախ:

Ամբողջ հաւորին մէջ ուշադրութեան արժանի շատ կէտեր կան, որոնք մի առ մի յառաջ բերել աւելորդ կը լինի. բայց մեր սահմանէն դուրս լինելով հանդերձ՝ ջանաջինք մասնաւոր ընել մէկ քանի վրիպանքներ և անուշադրութեան հետեւանքներ, ընթերցողին գողտփար մը տալու նպատակաւ:

Այս զիտողութիւններէն յետոյ մեզ կը մնայ բոկ թէ Տ. Մեարաց փարգապետ Տ. Մովսէսեան՝ Սոկրատ Սքորասարկոսի եկեղեցական պատմութիւնը բաղդատելով Խորենացւոյ խնդրոյ առարկայ եզոյ ծանօթ գլուխներուն հետ չէ կրցած ստոյգ և վերջնական եզրակացութեան մը գալ, այլ իւր կարծիքներն անյուժանելի մնացած են:

Արդարեւ զեկեղեցիի ձեռնարկ մ' է ծանօթացնել հաւատարմութեան մեր նախնեաց զործերը և անոնց մէկ քանիներու մասին վերջերս յերևան եկած թեր ու գէմ կարծիքները ուղղել. բայց ամէն բան իրեն հաստատուն հիմը պիտի ունենայ որպէս զի կառնուող մէկը իր շէնքը կաստցանել այդ հի-

մին վրայ. պատմական խնդիրներով զբաղողներու համար կարեւոր է այդ: Այս առումով թեմը ներսի մեզ բոկ թէ Հ. Մեարաց փարգապետի գրութիւնը պատմական իրերու մասին շատ անզոր է և ինչ որ բաղձալի էր անոր մէջ գտնել, այն չէնք կրնար գտնել: Սոկրատայ եկեղեցական պատմութիւնը անբաւ նիւթ է մեր մատենագրութեան համար, մանաւանդ փորձը որուն մէջ մեր նախնեաց թարգմանութիւններէն շատ մը կտորներ և յաւելումներ կանգնեմք: Հ. Մեարաց այդ զիւրք իր ամէն մասերովը ուշադրութեան առարկայ բրած չէ. իր զրածը շատ անգամ է կատարեալ ուսումնասիրութիւն չենք կարող համարել զայն:

Աղան Վարդապետ Արծրունի

Փ. ՏԵՍՈՒՅ ԴՊԵՏԱԿԱՆՈՒՅ



Г. А. ЭЗОВЪ.

Сношения Петра Великого съ Армянскими народами. Документы, извлеченные изъ московскаго главнаго и санктъ-петербургскаго архивовъ министерства, иностранныхъ дѣлъ австрійскаго придворнаго и госуд. архива, королевско-баварскаго тайнаго государственнаго архива и другихъ учреждений. С. Петербургъ 1898. 4. 3. 624 С. 463. 464. 465. 466. 467. 468. 469. 470. 471. 472. 473. 474. 475. 476. 477. 478. 479. 480. 481. 482. 483. 484. 485. 486. 487. 488. 489. 490. 491. 492. 493. 494. 495. 496. 497. 498. 499. 500. 501. 502. 503. 504. 505. 506. 507. 508. 509. 510. 511. 512. 513. 514. 515. 516. 517. 518. 519. 520. 521. 522. 523. 524. 525. 526. 527. 528. 529. 530. 531. 532. 533. 534. 535. 536. 537. 538. 539. 540. 541. 542. 543. 544. 545. 546. 547. 548. 549. 550. 551. 552. 553. 554. 555. 556. 557. 558. 559. 560. 561. 562. 563. 564. 565. 566. 567. 568. 569. 570. 571. 572. 573. 574. 575. 576. 577. 578. 579. 580. 581. 582. 583. 584. 585. 586. 587. 588. 589. 590. 591. 592. 593. 594. 595. 596. 597. 598. 599. 600. 601. 602. 603. 604. 605. 606. 607. 608. 609. 610. 611. 612. 613. 614. 615. 616. 617. 618. 619. 620. 621. 622. 623. 624. 625. 626. 627. 628. 629. 630. 631. 632. 633. 634. 635. 636. 637. 638. 639. 640. 641. 642. 643. 644. 645. 646. 647. 648. 649. 650. 651. 652. 653. 654. 655. 656. 657. 658. 659. 660. 661. 662. 663. 664. 665. 666. 667. 668. 669. 670. 671. 672. 673. 674. 675. 676. 677. 678. 679. 680. 681. 682. 683. 684. 685. 686. 687. 688. 689. 690. 691. 692. 693. 694. 695. 696. 697. 698. 699. 700. 701. 702. 703. 704. 705. 706. 707. 708. 709. 710. 711. 712. 713. 714. 715. 716. 717. 718. 719. 720. 721. 722. 723. 724. 725. 726. 727. 728. 729. 730. 731. 732. 733. 734. 735. 736. 737. 738. 739. 740. 741. 742. 743. 744. 745. 746. 747. 748. 749. 750. 751. 752. 753. 754. 755. 756. 757. 758. 759. 760. 761. 762. 763. 764. 765. 766. 767. 768. 769. 770. 771. 772. 773. 774. 775. 776. 777. 778. 779. 780. 781. 782. 783. 784. 785. 786. 787. 788. 789. 790. 791. 792. 793. 794. 795. 796. 797. 798. 799. 800. 801. 802. 803. 804. 805. 806. 807. 808. 809. 810. 811. 812. 813. 814. 815. 816. 817. 818. 819. 820. 821. 822. 823. 824. 825. 826. 827. 828. 829. 830. 831. 832. 833. 834. 835. 836. 837. 838. 839. 840. 841. 842. 843. 844. 845. 846. 847. 848. 849. 850. 851. 852. 853. 854. 855. 856. 857. 858. 859. 860. 861. 862. 863. 864. 865. 866. 867. 868. 869. 870. 871. 872. 873. 874. 875. 876. 877. 878. 879. 880. 881. 882. 883. 884. 885. 886. 887. 888. 889. 890. 891. 892. 893. 894. 895. 896. 897. 898. 899. 900. 901. 902. 903. 904. 905. 906. 907. 908. 909. 910. 911. 912. 913. 914. 915. 916. 917. 918. 919. 920. 921. 922. 923. 924. 925. 926. 927. 928. 929. 930. 931. 932. 933. 934. 935. 936. 937. 938. 939. 940. 941. 942. 943. 944. 945. 946. 947. 948. 949. 950. 951. 952. 953. 954. 955. 956. 957. 958. 959. 960. 961. 962. 963. 964. 965. 966. 967. 968. 969. 970. 971. 972. 973. 974. 975. 976. 977. 978. 979. 980. 981. 982. 983. 984. 985. 986. 987. 988. 989. 990. 991. 992. 993. 994. 995. 996. 997. 998. 999. 1000.

Դիւքը մեծադիւք 40 է. ընտիր թղթի վրայ մեծ խնամքով տպուած: Պարունակում է. ա. Յանի (էջ I—XVI), բ. Ներածութիւն (էջ XVII—CXLV), գ. աշխատութեան համար զործածուած զբեքի ցուցակ (էջ CXLVII—CXLIIX), դ. բուն թղթերը (ДОКУМЕНТЫ) որոնք տնին № 305 (էջ 1—462), ե. առաջին յաւելում՝ Էմմ Արաւի և Կարս որդու պատկարներն մասին բաղումներն ժամանակակից կաթողիկ յարակներն զրածներն (էջ 465—474) և երկրորդ յաւելում՝ Սէն Մարտինի Հայաստանի ուսումնասիրութեան ծրարքը, զորում Ազգաբնակչ ֆոն Համբուրգի համար (էջ 474—479), զ. ցանկ յա-

տուի անուանց հայերէն (էջ 481—488) և ուս-
տերէն աւերպական լեզուներով (էջ 484—512):

Աշխատութեան առանձին մասերն պարզ
թուարկութիւնը և թղթերի ողբիւրներն յիշա-
տախօթիւնը աւելի քան սիրմանսօս վիճակն են,
թէ մեր յարգելի և ախանաւոր ուսումնականը
չէ խնայել ոչ նիւթական և ոչ բարդական միջոց
ի մի հասարակութիւնը պատմութեան նոր և նորա-
դպն շրջանի փաստաթղթերը՝ զիտութեան պա-
հանջման կատարեալ հոգատարութեամբ և երա-
նակաւ և հրատարակելով, ապագայ պատմիչներին
թանկացին զանձ մատակարարելու: Թղթերը
զատու որու ած են ժամանակագրական կարգու,
ամենահինն է 1798 թ. մայիսի 2-ից, ամենաժեր-
ջինն է 1736 թուի մարտ ամսից. մի մասը բնա-
ղբեր են, մի անկողն թարգմանութիւններ, կամ
պատճեններ և հրատարակուած են այն լեզուով
որով պահուած են. այն է հայերէն, ասորերէն,
գերմաներէն, ֆրանսերէն և լատիներէն. այնպէս
որ նոյն թուղթը երբեմն կայ կրկին լեզուներով
թէ և տարբեր համարներով:

Այդ նշանաւոր թղթերը, որոնց մեծ մասի
յարագայ պայմանները ծանօթ չեն և որոնց մէջ
կատարեալ յաջորդականութիւն չկայ, որովհետեւ
բացի այն որ պահուում են ժամանակակից որեւ
է անձի բացատրիչ պատմական տեղեկութիւննե-
րը, ինչպէս օրինակ այդ կայ Ներսէս Ենքանա-
կըն յունաց գրած միտարարութեան խնդրի վերա-
բերեալ թղթերի մէջ, կամ Աւետիսեան Լալակո-
պոսի Վարաց դարձի պատմութեան մէջ, իսկ նա-
րերս Սիմէան կաթողիկոսի նշանաւոր յիշատա-
կարանի մէջ, պահուում են նաեւ յաջորդակա-
նութիւնը ամբողջացնող բուական նշանաւոր
թղթեր: Արևու. թերին ևս լիովին լրացել է բազ-
մաշխատ հրատարակիչը իւր ընդարձակ և գեղեցիկ
նկարածութեան մէջ, ուր նա հիմնուելով հայ և
օտար աղբիւրների վրայ, հրատարակուած թղթե-
րի ժամանակից յետ ու առաջ դնալով, կենդա-
նի արձանացնում է հայ ժողովրդի ճշմարիտ քը-
րիստոնէական երկայնատութեամբ, համբերողու-
թեամբ կրած ամենատեսակ անկարագրելի տան-
ջանները և վերականգնութեան այն շրջանը,
երբ հիսկում միկրութեան յուսոյ նշույլ շողաց:
Մինչ այդ հայերը տանջուել մաքաւել էին իրեն
քրիստոնէական, վարձ և միկրութիւն երկնքից
սպասելով, շուրջ բոլոր խաւար էր, տիրում էր
մահմադական աշխարհը. Վերադառնալով իսկապէս
մեծապրեց բարձրացրեց Ռուսաստանը, նորա մե-
ծամեծ յաղթութիւնների արձագանքը հասա-
րակելի չարատանջ քրիստոնէական ախանջնե-
րին և ստրա սկսեցին յուսալ, ամբանալ. Վերադա-
ռնալով շարքութիւնից չխուստիկեց՝ թէ Ռուսաս-
տանը ինչ կարենոր դեր ունի կատարելու ամբողջ

արեւելքում և մասնաւորապէս քրիստոնէայ ժո-
ղովրդների վերաբերմամբ. նա քրիստոնէական
պարտք էր զգում ազատելու նոյա և գիտէր
հաստատապէս որ իւր առաջի յաջորդութիւնները
նոյա անձնուէր ձեռնառաւթեամբ է լինելու:

Պ. Եղեանք շատ յաջող, անկասկած ոչ ա-
ռանց լաւ մտածելու, իւր ներածութեան մէջ
յառաջ է ընթանում միայն մենչեւ Երանաբար ժա-
մանակները (1585—1628) և համառ օտակի նկա-
րագրելով նորա պատերազմական յաջողութիւն-
ները, որին միացաւ մասամբ նաեւ Պարսկաստա-
նի անտեաական բարեփոխութիւնը, ցոյց է տալիս,
որ այդ անցողակի յաջողութիւնները չկարողա-
նալով ազատել պարսից կողմաւոր ծուռ ուղեւոր-
ութիւնը վերջնական քայքայումից, կործանիչ հա-
րուած հասցրին երկու քրիստոնէայ՝ հայ և վրացի
ազգութիւններին: Աւերաւի Հայաստանը զարեւրի
ընթացքում ուրան էլ մեծ հարուածներ էր կրել,
ուրան էլ հայերի մի մասը անկարող երկար համ-
բերելու թողել հեռացել էր բուն երկրից օտա-
րութեան մէջ հանգստութիւն, կենսիկ ապահո-
վութիւն որնեւելով, դարս ընդհանրապէս մասնա-
կան երեւոյթներ էին, համեմատ դարերի անկա-
ղաղ և կիսաքաղաքակիրթ դրութեանը, յատուկ
բոլոր երկիրներին և ազգերին՝ տարբեր չափերով:
Հայերը բուն հայկական բարձր անդակի վրայ
մեծամասնութիւն էին կազմում. երկրագործու-
թեամբ ծաղկած էր երկրի, վաճառականութիւ-
նը Ասիայի և Եւրոպայի մէջ հռչակել էր հայերի
անուներ, իրենց դրութիւնը հիմնովին փոխուելով երբ
Երանաբար արեւելեան բռնակալի յատուկ բար-
բարութեամբ դժոխայայլին միաք յղացաւ. ա-
նապատ սակզեւ իւր երկրի և Տաճկաստանի սահ-
մաններին մէջ, որպէսզի գրանով թշնամու յար-
ձակողական շարժման առաջն առնէ: Ամալանում
է Հայաստանի կենդանութիւնը, նորա սիրտը. և թէ և
Եւրոպական և յետոյ ուստաց գէնքի օգնութեամբ
Հայաստանն ազատելու միկրալ յղացում է
Մայր Աթոռում, ու Եւրոպականում և երջանակե-
շատակ Յակար կաթողիկոսն է մտածում մի քա-
նի հայրենասէրների հետ գեղականութեամբ և բո-
ւական արքունիքներին, նոյն իսկ Հռոմից պա-
պին ղեմել և օգնութիւն հայցել, բայց բուն
գործի ժամանակ հանգեսում մնում են գլխա-
ւորապէս միայն Արքայի և Սիմեոն նահանգնե-
րի հայերը իրենց մէլիկներով, որոնք 40, մինչեւ
80,000 զօրաց բանակ են կազմում որ ուստաց
զօրքի հետ միացած գործեն ընդհանուր թշնամու
դէմ: Եւր էր պատճառը, որ ուստները Վարա-
տանին տիրելուց, Արքայիւմ, Սիմեոնում հա-
տատուելուց յետոյ, դեռ բաւական ժամանակ է
անցնում մինչեւ ազատութեան հերթը հասնում է
Արարատեան նահանգին:

Հասարակ աւերից առաջ և յետոյ երկրի մէջ բուն էր գրել մի ուրիշ թշնամի, որ պակաս վտանգաւոր և կործանելի չէր, այդ կաթողիկ հոգեւորականների գանադան մարդորս քարոզիչներն էին, որոնք Ժ-Գ դարում հաստատուելով Պարսկաստանում աստիճանաբար ցանցով պատել էին ամբողջ երկիրը, որոշած Հայոց եկեղեցին անպատճառ ենթարկել Հռոմիայ գահին: Գոցա ցանկութիւնը վտանգաւոր էր մանաւանդ նրանով, որ իրենք ընդհանրապէս միջոցների մէջ ընտրողութիւն չգիտէին, միւս կողմից ֆիանսական զօրեղ տէրութիւնը Լուդովիկոս Ժ-ի ժամանակից ի վեր քաղաքական նպատակներով ամեն կերպ նոցա օժանդակում էր: Կաթողիկ քարոզիչները որպէս զի աւելի յաջողութիւն ունենան, Երեւանի տար-դարի ձեռնադրութեամբ այդ քաղաքում էլ սկըսեցին դործել և զբանով նոքա կամենում էին մահացու հարուածը Հայոց կենդանական սրբավայրին՝ Էջմիածնին հասցրած լինել: Այդքան մեծ ծրագրով ձեռնարկած քարոզչութեան արդիւնքը այսօր քաջ յայտնի է. մի հատ կաթողիկ չկայ այնտեղ ուր քարոզել են Բարդուղիմէոս Բոսնանացին, Յոսան Բոնեցին. Բոնայ վանքը աւերակ ընկած է Երեւանի ու Կարապետի հոյակապ կանգուն վանքի հանդէպ, Բոնայ գիւղի բնակիչները մահմեդականութիւն ընդունած կաթողիկ հայեր են, բայց այդ ջանքերը ո՞րքան վիշտ, դժբախտութիւն, ո՞րքան արտասուք և անմեղ զոհեր են խլել ժամանակակիցներից. կրօնական ջերմեռանդութեամբ ոգևորուած պատերները ո՞րքան են մեծացրել ժամանակակիցների առանց այն էլ չտրադանց սոսկալի անտանելի նեղութիւնները. և վերջապէս միթէ՞ անցեալի տխուր փորձը դաս չպիտի լինի ներկայիս համար:

Հասարակ գաղթեցրած հայերը Սպահանի մօտ հիմնեցին Նոր-Ջուղա քաղաքը և շահից հովանաւորութիւն գտնելով, կարողացան վաճառականութեամբ բաւական առաջ գնալ, անտեսապէս բարեկեցիկ վճռակ ստեղծել. բայց հաւատարիմ իրենց հայրերի քրիստոնէական կրօնքին, զերծ չէին անընդհատ հալածանքներից: Մահմեդական օրէնքները խիստ ճնշել էին քրիստոնէական համար. մանաւանդ այն օրէնքը, որով բնտանիքի մահմեդականութիւն ընդունած որեւէ անդամ աէր էր դառնում բնտանիքի ամբողջ կայքին: Եւ շնայած դրան, մինչդեռ հայերը մինչև օրս Պարսկաստանի խորքում, բոլորովին կող-դիացած, կարում քրիստոնէական աշխարհից, քրիստոնէայ են մտնացել, նոցա հետ միաժամանակ զաղթած 80,000 վրացի բնտանիքները շատ շուտով հաւատաւորիս լինելով, միացան պարսիկներին հետ նաև ազգովին: Արացիների վիճակը

բուն երկրում ընդհանրապէս ոչնչով չէր տարբերում հայերի վիճակից. իրաւ է այնտեղ խելում էին վրացական արքայական ցեղից դուքսիսաններ, սակայն փոքրութիւն մեծ գաղթականութեամբ խիստ նուաղած, ներքին երկպառակութիւններով աստիճիկ ջլատուած, չէին կարողանում զիմա-դրել պարսիկների և օսմանյիների յարձակումներին և ստիպուած էին կատարել նոցա պահանջները: Այդ խաներից շատերը ընդունում էին մահմեդականութիւնը, թէև դրանից էլ երկրին և ժողովրդին օգնութիւն չէր լինում:

Աղէտներից չարագոյնը, ոչ միայն քրիստոնէականների, այլ նաև բոլոր բնակիչների համար, գահակալական յաճախ փոփոխութիւնն էր: Հաս-հերը փոփոխում էին արեւելքում սովորական բունի եղանակով, մինչև նորի հաստատուիլը զօրեղ մեծ խաները ապստամբում, իրենց անկախ էին հրատարակում, տեղի էին ունենում արեւ-նահեղ պատերազմներ, որոնց ծանրութիւնը զարձակ կրում էր չարատանջ ժողովուրդը: Ի վերջոյ եթէ յիշենք խաների շատ յաճախ մի-մեանց դէմ մղած պատերազմները, մօտաու-րապէս լրացած կլինի այն պատկերը, որ ներ-կայացնում էր մեր երկիրը դարուս սկիզբները և նրանից առաջ:

Հեղինակն այս ընդհանուր հայեացքից յետոյ, որի միայն կմախքը վերաբաղեցնեմ (հատուած I, II,) անցնում է նկարագրելու Իսրայէլ Օրիի դործուէութիւնը (հատուած III—XI) լուսա-բանում հրատարակուած թղթերով, և ներածու-թեան այդ մասն է որ մեծ նորութիւն պարու-նակելով, աշխատութեանը հետաքրքրութիւն և առաջնահարգ կարևորութիւն է տալիս:

Յակոբ Գ. կաթուղիկոսը 1678 թ. II. էջմիածնում գաղտնի ժողով է դու մարում, որին մասնակցում էին վեց հոգևորական, նոյնքան էլ աշխարհական անձինք ու որ որոշում են, զաղտնի Եւրոպա մի պատգամաւորութիւն ուղարկել և օգնութիւն խնդրել մահմեդականների դառն լճից ազատուելու: Բնաւում են 3 հոգևորական և 3 աշխարհական պատգամաւոր, որոնց մէջ էին ինքը կաթուղիկոսը և Պոռ խելաններ ցեղից մէկը Իսրայէլը, որը սակայն վախենալով պար-սից հալածանքներից, իւր փոխարէն ուղարկեց իւր Օրի որդուն: Պատգամաւորութիւնը անյա-

և արագ կատարուած հաւատաւորութիւնը վերադարձով վրաց ազգի ցեղական քնաւորութեան քացաւական կողմին, եւրոպայի ժամանակակից պատգամաւորից քաղաքիս վի-ստիւններ և անաչ քնաւոր, ուր քաւական անմիջապէս և մուայ զոյններով են նկարագրուած վրացական քնաւորութեան ցեղ և պախաւակի այլի ընկնող յաճու-րիւններ:

ջող վախճան ունեցաւ. կաթուղիկոսը մեռնում է Պօլսում: Ընկերները վերադառնում են: միայն Օրին հայ վաճառականների հետ անցնում է Եւրոպա: Նա 3 ամիս մնում է Վենետիկ: 12 տարի Փրանսիա զինուորական ծառայութեան մէջ և 4 տարի Բաղարիայի Յովհաննէս Վիկէմի կուրֆիւրստի իշխանութեան մէջ: Նա այդտեղ սովորեց անհնազանդ մտենալու. կուրֆիւրստին՝ նկարագրում է հայերի և վրացիների սղբալի զրույթները և մեկնում իւր հայրենիքից հեռանալու գաղտնիքը: Իշխանը խիստ բարեհաճած է գտնում և որոշում է օգնել հեռու արեւելքի քրիստոնէականներին. նա յանձնարարական թղթերով Օրինն ուղարկում է Էջմիածնի և Գանձասարի կաթուղիկոսներին: հայ մեկեքներին և վրաց Գէորգի իշխանին: Էջմիածնի գահը թափուր էր Եղիազարի մահից յետոյ (1691 թ.) Օրին ստիպում անցաւ Գանձասար և առանց իւր գաղտնի նպատակը յայտնելու, բացառիկը որ Եւրոպայից մի հօգը պետ իրեն ուղարկել է նիւթահան նպատակով բաժանելու հայ վաճառքներին եկեղեցիներին: միայն իւր կարգած անձանց ձեռքով մի պայման որ չընդունեց. Օրին այդտեղից գնաց Սիւնիք՝ Անդեգաղթի գլխավարացում ժողովից հայ մեկեքներին և բացեց իւր գաղտնիքը: Մեկեքները մեծ պատրաստակամութեամբ և ուրախութեամբ ընդունեցին իրենց անլուր կորած համարում արտադամս որին, զբաւ որ խոտտումներ յանձնեցին նրան, կնիքներով և ստորագրութիւններով վաւերացրած, յանուն կուրֆիւրստի, Հրապիմայ պապի և Պետրոս Մեծի: Նորա համառօտ թուում են իրենց կրած նեղութիւնները, իրենց մեծ պատրաստակամութիւնը զբամական օգնութեամբ, զօրքով, զօրաց պաշարով ամեն կերպ նպատակու և խնդրում են ամենայն վրատահաւթեամբ վերաբերուիլ Օրինին իրեն հայերին քաջաճանօթ նոր և հաշտուար Պառք քնտանիքի ներկայացուցիչին: Օրին ընկերակցելու համար մեկեքները ուղարկեցին Ս. Յակոբ վանքի վանահայր Մինաս վարդապետին:

Օրին ստիպում էր 6 ամիս անդործ ուղարկել կուրֆիւրստի արքունիքում վերջին հիւանդութեան պատճառաւ և յետոյ նորա ու հոգով մահան կույսեր խորհրդով և յանձնարարական թղթերով գնաց ներկայանալու ռուսաց Պետրոս ցարին և խնդրելու նրանից թէ օգնութիւն և թէ թալանութիւն իւր երկրի միջով ազատ ճանապարհ եւրոպական զօրքի համար: Նա Մինաս վարդապետի հետ Մոսկով հասաւ 1700 թ. մօտ 7 տարի մնաց այդտեղ. բայցարին Գոլովինի միջոցաւ մանրամասն և խիստ կարեւոր տեղեկութիւններ հաղորդեց Պետրոս Մեծին՝ թէ Հայաստանի վիճակի մասին, թէ պարսկի տէրութեան քաջա-

յեալ և ուժաւորաւ զրույթեան մասին: յայտնելով որ 4000 ռուսական զօրք հայերի ձեռքն առնութեամբ ամենայն զիւրութեամբ կտիրեն ամբողջ Հայաստանին: Եւ ի վերջոյ իրեն յանձնարարեալ կուրֆիւրստից յայտարարեց որ սա պատրաստ է օգնելու հայերին եթէ մտաւ լինի թէ ռուսաց հողից անցնելու ազատ ճանապարհ կունենայ: Մեծն Պետրոսը զործի սկզբից իրեն բարեհաճ ցոյց տուեց գէպի հայկական խնդիրը: Գոլովինի միջոցաւ քաղած տեղեկութիւններից յետոյ՝ անձամբ ընդունեց Օրին և Մինաս վարդապետին: բայց զբական օգնութիւն՝ հակառակ իւր ցանկութեան չէր կարող ցոյց տալ. հիւսիսային-չվեղական մեծ պատերազմը բարել էր նրա ամբողջ ուշադրութիւնը. ազատ չէր նաեւ կուրֆիւրստը. նա էլ պատերազմում էր Փրանսիացիների դէմ: Այդ ժամանակաւ որ անջաղութիւնները չյուսահատեցրին Օրին. նա բաւականացաւ սկզբում հետեւեալ երեք պայմաններն ընդունելով. 1. Նրան յուսադրեցին որ չվեղական պատերազմից յետոյ զբականապէս յօդուաւ նրա յարուցած հարցի միջոցներ կձեռնարկուին: 2. Նրան թոյլ տուին այդ խոտտման մասին պաշտօնապէս հաղորդել կուրֆիւրստին և 3. նրան ընդունեցին ըստ խնդրանաց զինուորական ծառայութեան մէջ: Այդքան ուրախութեամբ չուրք հաղորդելու համարն Գիւսկարովի ուղարկեց նազար Օրեխովիչին իսկ հայ մեկեքների մօտ ուղարկեց Մեդոն Վասիլովին: Հայերի ուրախութիւնը կատարեալ էր. Էջմիածնի կաթուղիկոսը մինչև անգամ սահմանեց բոլոր եկեղեցիներում մաղթանքներ կատարել ցարի համար. իսկ մեկեքները յայտնում էին իրենց մեծ պատրաստակամութիւնը:

Այդքան երկար անդործութիւնը Օրին անտանելի էր. նա իրեն առանձնանորհութիւն խնդրեց Պետրոս Մեծից իրեն շնորհել պոլկովնիկի տառիճանի թոյլ առլ գնալ Եւրոպա: անտեղ յանձնարարականներ ձեռք բերել, իւր ծախքով մի արաւակարդ գետապանութիւն կազմելով գնալ Պարսկաստան և մանրամասն ուսումնասիրել բոլոր պայմանները ապագայ պատերազմի յաջողութեան համար: Պահում են բաւական թրդթեւ, որոնք վկայ են թէ ինչ դժուարութեամբ և ինչ համբերութեամբ կարողացաւ հասնել իւր նպատակին: 1707 թ. յունիսին նրա արտակարգ գետապանութիւնը՝ բաղկացած 50 հոգուց՝ պատրաստ էր. նա գնում էր իրեն գետապան Հովսէփ պապին կուրֆիւրստի և ռուսաց ցարի որոնցից հրովարտակներ ունէր և շահի համար տանում էր ցարից առանձին ընծաներ: Այդ արտասովոր գետապանութեան լուրը շուտով հասաւ Պարսկաստան, յայտնուեց որ նրա գլուխն անցել է մի

հայ և ամեն կերպ փորձեցին շահին զրգել որ հրաժարուի նրան ընդունելուց։ շահին փորձում էին վախեցնել մանաւանդ Իսրայէլ Օրինն անու- նով որի մէջ իբր թէ դու շահու թիւն կայ որ նա ին- նելու է արքայ-իլ sera roi-ի բայց շահի երկիւղն ուսմաների անունից աւելի մեծ էր և նա ընդու- նեց՝ մինչև անգամ մեծ շքով։

Ամբողջ երկու տարի Ռուսաստանում դեռ պահուի թեան մասին լուր չէր ստացուում։ միայն 1709 թ. Աղէքսանդր կաթողիկոսը շնորհակալա- կան կոնդակ ուղարկեց ցարին՝ Օրինն ցոյց տուած մեծ շնորհքի համար։ Օրին անգործ չէր մնացել, նա երկրի մէջ կայեր էր հաստատել, կարենք աւ- դեկու թիւններ էր ժողովել շվեդացոց փորձերի մասին Ռուսաստանի դէմ միանալ ստանկներին և մինչև անգամ պարսիկներին հետ և այդ լուրերը ժամանակին Մինաս վարդապետի միջոցաւ հա- ղորդելէ։ Աւելի մեծ շքով, ապագայի փայլուն յայտերով՝ շուտով իրականացած տեսնել իւր հայ- բեներէի ազատութիւնը։ Օրին վերագտնում է Ռուսաստան։ Նա երկրի բերքերից թաղաւորի համար ընծաներ էր տանում։ ձիեր, կերպուսներ, պաուղներ, գլխիներ ևլն. նրան ուղեկցում էին Աղուանից Եսայի կաթողիկոսը երկու արքեպիս- կոսան հետ։ 60 հազի հմուտ կերպարող օրծներ, որոնք Մոսկովայում նոր գործարաններ պէտք է բանալին։ Եթէ մինչև այդ ժամանակ բախոր շարունակ ժողտայել էր նրան, այնուհետև ծա- խորդութիւնները դարձան նրան բաժին, նա մեծ դժուարութեամբ կարողացաւ երկու նաւ վար- ձել Հաշտարխան տեղափոխուելու համար, փա- թորիկը նաւերը բաժանեց միմեանցից, նաւա- պետներէից մէկը ապօրինի իրան սեղհականեց կայ- սեր համար որոշուած ընծաների մի մասը, Հաշ- տարխանում բոլոր ընծաների համար մարս էին պահանջում և մինչդեռ Մինաս վարդապետի մե- ջոցաւ մատուցած իւր գանգատներին և խնդրա- նաց պատասխանին էր սպասում։ Ասորանի վոյե- փա Ապրակինը հաղորդեց Մոսկով 1711 թ. նո- յեմբերի 7-ին «Պարսկաստանից ծովով նաւերի վրայ Հաշտարխան եկաւ Հոռոմ պապի գեապան Իսրայէլ Օրին, ապրեց մօտ 2 ամսաշաւի, մեռաւ օգոստոս ամսում և թաղուեց իրենց կրօնի ծէ- սով Հաշտարխանում Հայոց եկեղեցու մօտ։»

Այդ ահնկալ դժբախտութիւնից յետոյ Օրինն ընկերակցող հայերը վերագարձան հայրենիք։ Մի- նաս վարդապետը երկար փորձերից յետոյ կարո- ղացաւ նորա բերած ընծաների մի մասը ազատել և 1712 թ. թագաւորին ներկայացրեց 26 ձի, զորդեր, թաւիշ, կերպասէ գործուածքներ, ար- ծաթէ շնուածքներ, թանկագին մորթիներ, ա- սեղնագործ տիւրայներ, 6 ֆութ կաֆէ, 21/2 փուտ ընկալ, մերգ էին։

Օրին գործը շարունակող մնաց Մինաս վար- ղապետը որ չունէր ոչ նորա հեղինակութիւնը, ոչ հասկացողութիւնն և գործելու ընդունակու- թիւնը, թէև շարունակում էր սուսաց գեւանին տեղեկութիւններ հաղորդել, մանաւանդ երբ 1716 թ. առանձնաշնորհաւ հրովարտաի ստանա- լով այցելեց Աջմածին։ Պանծասարի Եսայի կա- թողիկոսին, բայց այդքանով էլ վերջանում էր նրա կատարած դերը։ Պետրոս Մեծը փառա- ապէս յաղթել էր հիւսիսային մեծ պատերազ- մում։ Ռուսաստանի համար արեւմտեան տէրու- թիւնների շարքում մինչև այդ չեղած գիրք էր ստեղծել, և անշէղ իւր նախամտածած բռնելիք զիբքի մասին դէպի արեւելեան բրիտանականները դէպի արեւելքի կիսաօղակների քաջբայտ սղ տէրու- թիւնները, դրական գործի անցնելու ժամանակը հասած համարեց։ Նա իւր պաշտանաների մե- ջոցաւ հարկաւոր հրահանդներ հաղորդեց վրացի Ալիթանդ իշխանին։ Եսայի կաթողիկոսին և հայ մելիքներին պատուիրելով պատրաստ լինել և միանալ իւր զօրքի հետ որի գլուխն անցած 1722 թ. Հաշտարխանից նաւերով մտել էր պարսկական Աստղից ծովափնեայ դաւառները։ Պատմութիւնից յայտնի է թէ ինչ վախճան ունեցաւ այդ արշա- ւանը։ Թէ ինչպէս Պետրոս Մեծը զբաւելով միայն Գերբեաք՝ առկաւած եղաւ շտապով վե- րադառնալ Ռուսաստան, ուր քաղաքական նոր բարդութիւններ էին ծագել, իսկ Հայոց և Արաց զօրքը որ կայր և պատրաստ սպասում էր Քան- ծակի մօտ անհամբեր մեծ կայսեր դաշտեան, յուսահատ և յուսախախտ ցրուեց, ամբացաւ երկ- րի ամուր կողմերը և երկար ժամանակ յուսա- հատական, անհաւատար կաւ միեց թէ պարսիկ- ների դէմ, որոնք որոշել էին գլխովին ջնջել հա- յերին, սոցա համարելով արտաքին թշնամուն երկիրը ներս հրաւիրողներ և մանաւանդ ստանկ- ների դէմ, որոնք կամենում էին զրուել պարս- կական այդ նահանգները, ուսմանից լուել Աստղիական դաւառները և պաշտպանուած լի- նել ապագայում։ Հայերը զարմանալի հաւա- տարմութեամբ շարունակեցին հաստատ մնալ սուսաց կայսեր տուած խոտամանք և հարկաւոր դէպքում առանց վարանուելու յայտարարում էին իրենց այդ հաւատարմութիւնը։ Յիշենք օրինակ մի դէպք։ Արթիթիայի Մահմեա Աուլի խանը հայ զօրքի գլխաւորներին մեծամեծ խոտ- սումներ անելով, առաջարկում էր միանալ իւր հետ և ուսմաներին հետացնել, հայերի պա- տասխանը լինում է. «Մենք չենք ցանկանում ոչ պատիւ, ոչ փող, ոչ հող։ Մենք բեղնից ոչինչ չենք խնդրում և բեղ չենք կամենում ճանաչել, մենք ժողովուել ենք մեծ կայսեր հրա- լէքով, մենք նորա ստրուկները, ծառաներն ենք

և յայնմ նրա վրայ է: Եթէ Աստուծոյ ողորմութեամբ մեծ հայտնի կմանի այս երկիրը՝ մենք կմիանանք նրա հետ և կերթանք ուր նա կհրամայի: Խանք կուտարած՝ անսկիւալ յարձակուեց հայերն վրայ և 2000 հոգի ջարդեց: Այդ ծանր ժամանակները հայերը յայնմ չէին կարում: Ետայի կաթուղիս 1724 թուին Անտոն քահանային և Չեկերի մկրթին հայերի անուեկ ուղարկեց Պառտաւան ուրնք Հաշտարխանում երկար սպասելուց յետոյ՝ հասան Պետերբուրգ և արժանանալով հայեր ներկայութեան պատմեցին իրենց կրած նեղութիւնները՝ յայնմեցին որ հոյսերը 40+000 զօրք ունին պատրաստի՝ 10+000-ը ձիաւոր որ կայսերական զօրքը ամեն բան երկրում կդանի պատմեցին որ իրենք արդէն քանիցս յաջողութեամբ կառուել են թշնամու դէմ և յայթեւէ: Ի վերջոյ խնդրում էին՝ եթէ դժուար է կայսեր շուտով պատերազմ սկսելու՝ թող տայ իրենց զլիւսովն տեղափոխուել հայքնի հողից և վերաբնակուել նոր դրած երկիրներում: Գիւլան, Սալխան, Բազու և Գերբենա: Պ. Աղեւանը ոչ առանց հիմքի ենթադրում է՝ որ պատգամաւորները վերջի առաջարկութեան համար լիազօրութիւն և պատուէր չունէին, այլ նորա թելադրուել են Պոսիլայում կամ Պետերբուրգում: Բանն որ այնտեղ լուր յայտնի էր՝ որ կայսրը մտածում էր նորանոր ընտելիներով կենդանացնել նոր դրած ամայի դաւառները: Յամենայն գէտը կայսրը ոչ միայն ընդունեց, այլ և ամեն կերպ խրախուսեց հայերի խնդիրը: Նա պատու իրեց իւր գեաւորնին Վ Պոլսում ազդել օսմանեան կառավարութեան վրայ՝ որ արդէն չլինի քրիստոնեաներն կամովն հեռանալուն: Ընչպէս ինքն էլ արդէն չի յարուցանել, եթէ իւր երկրից մահմեականները կամենան հեռանալ: Հասկացնել, որ իրենք իրեն քրիստոնեայ պօրտաւոր են համակրօնակցներին օգնել: Հայերին էլ հրովարտակ ուղարկեց՝ պատուելի կաթուղիս Անտոյի և պատուելի ուղարկեց: Աւանի և Մերգայի (սուսերէն чествованию և чествованию) և ամենայն այլոց՝ պատուական (чествование) ուղարկեց և զլիաւորացդ, և ամենայն պատուական Հայոց տակիդ, մեր ինքն փրայթ օսմութեան ողորմութեամբ շատ բարեհասցէ: Երանց հրաւիրում է դալ տարել իւր երկրում հանդիստ և տպահով: Այդ էր Պետրոս Մեծի վերջին կարգադրութիւնը: Հայերը չզաղթեցին, նորա թէ գրամագիր չէին և թէ ամեն կողմից չըջապատուած թշնամիներն, երկնում էին իրենց ամուր գերբերեց հեռանալ: Պետրոսի անմիջական յաջորդները մինչև Ահատերին Մեծը խոտուումներ և գրազրութիւնների չըջանեց առաջ չանցան, մինչև անգամ 1732 և 1735

թուերին պարտիկներն վերադարձին միանգամ դրած գաւառները:

Պ. Աղեւանի հրատարակած թղթերը այդբանով էլ վերջանում են. ոտկայն նա ինչպէս յիշել ենք, ներածութեան մէջ պատմութիւնը ամբողջացնում է հասցնելով մինչև երկրի տիրապետութիւնը: Նա պատմում է թէ ինչպէս Ահատերինի ժամանակ, որը ամեն կերպ շարունակում էր իւր մեծ նախորդի առ ժամանակ կանգ առած քաղաքականութիւնը առաջ առնել, Պառտայ զօրքը նորից երեւաց Պովկատում տալջին անգամ Տուլէքէնի առաջնորդութեամբ: Սա պէտք էր ուսումնասիրան պատերազմի ժամանակ միացած վրաց Հերակլ իշխանի հետ յարձակուէր ասիական Տաճկաստանի վրայ: Ոտկայն վրացիները անձնական հաշիւներով փոխանակ նպատակու ուսուց զօրքին՝ կամենում էին իրենց նպատակին ծառայացնել և անգործ մնացնել Ախալցխայի վրայ յարձակման գէտրում, որով ծագեց տարածայնութիւններ և կայսրունհին յետ կանչեց իւր զօրքը: Բայց տհա հանգէս եկաւ ամենակողով Գրեղորից Պատեօմկներ իւր հաշակաւոր « յանական ծրագրով » որով կամենում էր ազատել քրիստոնեայ ժողովուրդները ստեղծել հայկական վրացական թագաւորութիւններ Պառտաւանից կախալ: Վ. Պոլսը նորից մարաքաղաք դարձնել: Հայերը սկսեցին նորից յուսադրուել, հանգէս եկան նոր գործիչներ, որանց հետ Պատեօմկներ ամենապար յարաբերութիւն է պահպանում, և որնք մեծ գերկատարեցին՝ դրա են Յովհաննէս Լազարեանը, յայտնի Լազարեան տան ներկայացուցիչը: Սակեան Գալիլովը՝ Արարատեան նահանգի հայերի կողմից ճանաչուած ներկայացուցիչը և մանաւանդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը: Հայքնատէրները սկսւորում եւանդով աշխատում էին, հայ միւլիքները մինչև անգամ Գանձադարի վանքում Յովհաննէս կաթուղիսից ուսուց գահին հաւատարմութեան երգում ընդունեցին: Իրաւհիմ խանը, Փանոս խանը որդին, ինքը փորձեց մանել Պառտայ հովանու տակ և երբ հաստատ դրաւական չընդունեց, սկսեց աւելի ստատութեամբ հալածել հայերին, որնց գժբախտութիւնից մեռան Պատեօմկներ և կայսրահին: Իսկ Պաւել կայսրը զօրքը Պովկատից յետ կանչեց: Հոտ չանցած 1800 թ. վրաց Գէորգի իշխանը հրաժարուեց գահից և Արատաւնք դարձաւ ուստական նահանգ, իսկ գժբախտ Հայաստանը գեա սպառում է իւր ազատուելուն, նրա միայն մի մասն է ազատուել մահմեականութեան դառը լծից:

Մեր յօդուածը գծուած ոահմանից շատ երկարեց, ստիպուած ենք կարճել և լռելեայն

անցնել Վարաբաղի և «Հայկական աշխարհի» տիրապետութեան մանրամասնութիւնները, Վարապետանը կառավարելու մասին կատարուած կարգադրութիւնները, այդ պատմութիւնները բուսական ծանօթ են մեր հասարակութեանը Բաֆֆել՝ Խամսայի միլիթոթիւն, Վարաբաղի առաջագէտը գրուածքներից, երեցեանի՝ Հայերը XIX-րդ դարում և Հայոց կաթուղիկոսութիւն գրքից, և կամփոխներ հաղորդելով Եզեանի հայեացքը Օրին անձնաւորութեան և Պետրոս Մեծի արեւելեան քաղաքականութեան ծրագրի մասին:

Ըստ այդ հայեացքի՝ Պետրոս Մեծի ծրագրերը այս էր. 1. Ռուսաստանի և Պարսկաստանի վաճառականական յարաբերութիւնների զարգացումը հայերի միջոցաւ. 2. Հայերով բնակեցնել պարսիկներից գրաւած գաւառները և 3. Հայերին ազատել մահմեդական լծից, ոչ թէ քաղաքական հաշիւներով, այլ իբրեւ «բրիտանական պարագ»:

Պետրոս Մեծը ձգտում էր Վասպից ծովով հաղորդակցութիւն հաստատելով Պարսկաստանի հետ, գուցէ դրանով նոր ճանապարհ բացած լինի Հնդկաստանի վաճառականութեան համար և միւս կողմից կամենում էր, որ Պարսկաստանում մեծ քանակութեամբ արտադրուած կերպարի առևտուրը հայերի միջոցաւ կենդրոնանայ ռուսների ձեռքին, այդ առևտուրը որ զանձարանի մենաշնորհն էր, մեծ օգուտ էր ապրիւս գանձին:

Երկրորդ նպատակը պարզ էր, գրաւած երկրի բնակիչները մեծամասնութեամբ մահմեդականներ էին և զօրա չէին կարող բարեխոյս հպատակներ համարուել: Նա կամենում էր զոչա փոխարինել հայերով, իսկ թուրքերին պատրաստ է եղել ուղարկելու Տաճկաստան:

Պահուած թղթերի մէջ բազմաթիւ են այնպիսի վիպայութիւններ, որոնք անհրեքելի ապացուցանում են, որ բարեպաշտ կայսրը վրդովւում էր լսելով բրիտանականների կրած հալածանքը, նոցա կոտորածը, նա առաջինը հիմք դրեց քրիստոնէականների ազատութեան քաղաքականութեանը Ռուսաստանում:

Իսրայէլ Օրին այն նշանաւոր հայն է, որ Եւրոպայի քաղաքականութեան մէջ մտցրեց հայկական հարցը: Նա Պոռտ իշխանների նշանաւոր սերունդից էր, որոնք իշխում էին Վարաբաղի Խաչէն գաւառում և ժ.Բ. դարից յայտնի են իբրեւ բրիտանէութեան համար մարանչոյներ: Օրին երկար ժամանակ Եւրոպայում մնալով, համարեա հաղորդակցութիւնը կտրում է իւրայիններից, ամուսնանում է Գիւսկոյորֆում և ունենում երկու զաւակ, միայն նա հուստաբրիմ մնաց իւր մայրենի եկեղեցուն, միևնոյն ժամանակ յայտնով կաթողիկ հոգևորականութեանը, որ եթէ

հայերը Պասկե աղագեցութեամբ ազատուին, կրնգունեն նորա գերիշխանութիւնը: Նա Եւրոպայում նիւթական մեծ նեղութիւններ է կրել, սկիզբը կարծում էր թէ կարող կլինի օգնութիւն գանել ֆրանսիական հօր Լուդովիկոս ժ.Գ. թագաւորից, 6 տարի ծառայեց նրա զօրքում և մինչև անգամ անգլիացիների ձեռքը դերի բնկաւ, պատերազմի ժամանակ: Երբ ազատուեց, լուսամտէլով, թողեց Ֆրանսիան, մտաւ Պֆալցի Յովհաննէս Վելհէլմ կուրֆիւրստի ծառայութեան մէջ, որը թէ քաղաքական դիւրով և թէ ազգակցական կապերով Եւրոպայի նշանաւոր իշխանն էր: Մոսկվայում իբրեւ կուրֆիւրստի գեսպան արքունական զանձարանից օրեկան հինգ ալաին վոյ էր ստանում, մինչդեռ նա անհամեմատ աւելի ծախքեր ունէր, նա իւր միջոցներով էր ճանապարհորդութիւններ կատարում, պատգամաւորներ ուղարկում Եւրոպա և հայ միլիթների մօտ, նա Պարսկաստանից երկու անգամ, մանաւանդ վերջին, վայելուչ պարգևներ է ստանում թէ կայսեր և թէ ազգեցիկ անձանց, և անտեղի են այն քննադատների կարծիքը, բոտ որոց իբր թէ Օրին իւր դործունէութեան մէջ առաջնորդում էր շահաւորական միտումներով:

Օրին թէև վաղուց հեռացած հայրենիքից, հմտ էր Պարսկաստանում տիրող պայպաններին և թէ Պետրոս Մեծի արշաւանքի ժամանակ նա լինէր կայսեր հրամանակատարը տեղական յանձնարարութեանց համար, արշաւանքի վախճանն ուրիշ կլինէր, նա դիւռը շատ լեզուներ, ֆրանսերէն, գերմաներէն, իտալերէն, բատիներէն, տաճկաց և պարսից լեզուները, և իբրեւ անհատ կարողանում էր գրաւել շատերի վստահութիւնն ու համակրանքը: Գովքով են խօսում նրա մասին կուրֆիւրստը, Լոմվայ կեսար, իսկ ցարը նրան արժանացրեց պաշխոյնիկի աստիճանի, Պետրոս Մեծի անձնաւորութիւնը, նրա ձեռնարկած արատաւոր բարենորոգութիւնները երկրի մէջ, պատերազմական յաջողութիւնները որանշացրել, ոգեւորել էին Օրին, նրա թղթերի մէջ շատ տեղեր կան այդ հաստատող, բայց նա սիրեց նաև Ռուսաստանը և որոշեց բնականբով բնգ միշտ ազգակց աեղափոխուել:

Երբ Օրին գեսպանութեամբ գնաց Սպահան, այնտեղ էր հայր եղուիս Արուսինսկին, նա համառօտ տեղեկութիւն է տուել նրա մասին, բնգհանրապէս խիստ աննպաստ, և այդ հայեացքի պաշապան է հանդիտացել նորերս գերմանացի Հելյեղ ուսումնականը, որը մի մասնական ուսումնասիրութեան մէջ, առանց որ և է հիմունքի, Արուսինսկու մեղադրանքը առաջ տանելով, Օրինը համարում է մինչև անգամ մի բախտա-

խընդիր: Հրատարակուած վաստաթղթերը աւելի չեն թողնում այդպիսի հայեացքներ:

Օրին օգնականը Վարաքաղի Ս. Յակոբ վանքի վանահայր Մինաս վարդապետն էր, որին մեղի են հանում Օրինի այցելութեան ժամանակ կարգել էին իրենց «վէթի»: Սա սահմանափակ մէկն էր, անկարող Օրինի դերը կատարելու, թէև նրա գործի շարունակողը մնաց և թէև մինչև անգամ հայերէն ուղիղ գրել չգիտէր: Նա պարզ աեղեկութիւններ հաղորդելուց առաջ չանցաւ, որոնք մատամբ կորցրին իրենց Նշանակութիւնը Պետրոս Մեծի մահից յետոյ, երբ քաղաքականութիւնը վախուեց, 1716 թ. Հայաստան ճանապարհորդելով Պանծատարի կաթողիկոսից ձեռնադրուեց եպիսկոպոս և խնդրեց կաշարից իրեն կարգել թեմական առաջնորդ Ռուսաստանում ցրուած հայերի վրայ, իսկ 1722 թ. խնդրում է Հայոց եկեղեցու համար աեղ տալ թէ Պետերբուրգում և թէ Պոսեյմպում: Նա մեռաւ մոռացութեան մէջ:

Այսքանով մենք առ այժմ վերջացնում ենք մեր առելիքը պ. Եղեանի գրքի մասին. սակայն հրատարակուած թղթերը պարունակում են անհատում գանձ ժամանակագրական, աեղագրական, տոմարային պատմական խնդիրների վերաբերմամբ, իսկ հայերէն ընդգիրք խիստ հետաքրքիր և կարևոր է լեզուի համար ևս: Մեր մեղքներն ու բէկերը, խօսքս միայն հին ծագում ունեցողների մասին է, թող հետաքրքրուին փոքր ինչ իրենց ծագումով, իրենց ընտանիքների աւանդական առաքելի յատկութիւններով, թղթերը փայլուն արտայայտութիւն են այդ յատկութեանց, որ պարտական են իրեն որբացան աւանդ, իրենց սերունդներին հաղորդելու: Այդ թղթերի մասին, մանաւանդ աեղեմիկ Սէն-Մարտինի՝ Հայաստանի ուսումնասիրութեան ծրագրի մասին, յոյս ունիմ ուրիշ առթիւ գրելու, այստեղ կհամենայն մի ցանկութիւն յայտնած լինել, գրքի ամբողջ ներածութիւնը համարեա անկախ աշխատութիւն է, նա թէ լեզուի և թէ գրքի թանգութեան պատճառաւ (դիմն է 5րդ) անմատչելի է մնալու մեր ընթերցող հասարակութեան մեծամասնութեանը, ուստի անհրաժեշտ էր նրան ամբողջովին թարգմանել և թեթև գնով մեծամասնութեան մատչելի կացուցանել: Չուտ ուսումնական ներածութիւնը անհասկանալի չի մնալ այդ դասակարգի ընթերցողներին, և ուրախալի կլինէր, եթէ նա այդ աեասի գրքերով կազմէր իւր գրական ճաշակը:

Մերսոյ վարդապետ.



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ 75-ԱՄԵԱՅ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԵՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԳՊՐՈՑԻ, որ ի Թիֆլիզ. Հատար Ա. (1824—1850 թ.) վեց պատկերով. — Աղիսանդր Գ. Երիցեանց. հրատ. Ներսիսեան Հայոց Հոգևոր Գործիչ. — Թիֆլիզ, 1898: — Այս կարևոր երկասիրութիւնը լոյս էր տեսել և ուղարկուել մեզ աղէն ամառուայ սկզբներին, և մեր կողմից դիմաւոր ներելի գանցաութիւն կլինէր տարին վերջացնել առանց դոնէ մի քանի խօսքով ծանօթութիւն տալու նորա մասին, որ ամենապատուաւոր աեղ է բռնում հայկական գրականութեան տարուայ ընթացքում յառաջ բերած արդիւնների մէջ և արժանի է մեր ընթերցողների առանձին ուշադրութեանն ու գնահատութեանը: Այս առաջին անգամը չէ, որ պ. Երիցեան իւր պատմադիտական և հնարկական աշխատութիւններով մի խիստ օգտակար ծառայութիւն է մատուցանում հայ հասարակութեանը: Երբ մեր ժողովուրդը ներկայ դարում քաղաքակրթութեան առաջնորդի վերայ ոտք դրաւ՝ նորա լուսաւորութեան կարապետներից մի մասի նշանարանն էր «մոռանալ Հայի ու Աեմնին», մոռանալ անցեալը և նոր հիմունքների վերայ աղղային կեանք կադմակերպել: Այդ մոլար աեոութիւնը յիշատի այնչափ աղղեցութիւն ունեցաւ, որ մեր նոր գրականութիւն մշակողները համեմատաբար շատ քիչ աեղ առին պատմական ուսումնասիրութեան, և հետեանքն այն եղաւ, որ կրթուած նոր սերունդը գրեթէ գաղափար չունի իւր աղղի ոչ միայն հին հին գրքերի, այլ ամենամօտիկ ժամանակների պատմութեան մասին: Այժմ, երբ կարծես զարթել և ընդհանրաւոր է սկսել մեր մէջ այն գիտակցութիւնը, թէ «ժառն արմատով է ծառ», թէ մեր պատմական անցեալից կարուած մենք միայն դատարի հոգմաղացներ կդառնայինք օտար քաղաքների համար՝ պ. Երիցեան այն բաղմաշխատանքն է, որ մեզ ծանօթացնում է մօտիկ անցեալի այն պայմանների հետ, որոնց միջից եւլաւ՝ որոնց մէջ սնուեցաւ ու գարդացաւ մեր ժամանակակից աղղային կեանքը: Եւ որ գլխաւորն է՝ նորա աշխատասիրութիւնները վայելի վերջ դատողութիւններ կամ երկրորդական երրորդական աղղիւններից բաղած հատուկաւոր անհատաաեղեկութիւններ չեն, ինչպէս լինում էին առաջ մեղանում սակաւթիւ պատմ. գրուածները, այլ երկար տարիների ընթացքում անդուշանքերով ձեռք բերած վաւերացիւթերի անմիջական արտադրութիւնը: Այդ վաւերացիւթերը մինչև իսկ այնչափ մեծ աեղ են բռնում նորա, ինչպէս միւս, այնպէս և մանաւանդ ներկայ գործի մէջ, որ նորա գրուածները որոշ աեասից աեւելի յարմար էր գտնել «պատմական Նիւթերի ժողովածու» քան իսկական «պատմութիւն» անուանել: